

«ԱՉԱՏԱԳՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ ՀԱՅՈՑ ԱՐՅԱՆԻ ՆՎԱճՎԱԾ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՆ Ե ԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԱԴՐԵԶԱՆՑԻՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»



Երեկ «Արմենիա-Մարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում «Հայոց համաշխարհային գործակցություն» հասարակական կազմակերպությունը նախաձեռնել էր «Հայրենատիրություն» մատենաշարի առաջին հատորի՝ «Հայաստանի ազատագրված տարածքը եւ Արցախի հիմնախնդիրները. Վերլուծական եւ փաստագրական նյութերի ընտրանի» ժողովածուի շնորհանդեսը: 369 եշանոց այս ժողովածուն կազմել եւ խմբագրել է գործակցության տևորեն, քաղաքագիտության դոկտոր Արմեն Այվազյանը: Ժողովածուն բաղկացած է 5 առանձին գլուխներից, ուսի ներածություն եւ հեղինակների մասին տեղեկության բաժին: Այստեղ գետեղված են 30 հեղինակների 34 հոդվածներ, որոնք ի մի են բերում ազատագրված տարածքի վերաբերյալ փորձագիտական միտքը: Հեղինակները Հայաստանի ազատագրված տարածքի հիմնախնդիրն անդրադառնում են Հայկական հարցի ընդհանուր համատեքստում, գնահատում այդ տարածքի ռազմավարական նշանակությունն արդի Հայաստանի (Արարայալ ՀՀ ու ԼՂՀ) անվտանգության համար, տալիս են դրա հայկական պատկանելության իրավական հիմնավորումները, լուսաբանելով ժողովրդագրական, տևտեսական եւ մշակութային խնդիրները:

Թեմայի ընտրությամբ, բարձրացված հարցերի հրատապությամբ եւ մոտեցումների հիմնավորմամբ եզակի այս ժողովածուն լուրջ ներդրում է ինչպես արդի Հայաստանի անվտանգության ամրապնդման, այնպես ել Արցախի հիմնահարցի արժանապատիվ լուծման մեջ:

Ընորհանդեսում բացման խոսքով ելույթ ունեցավ Արմեն Այվազյանը: Նա նշեց, որ ժողովածուն ստեղծվել է շատ սեղմ ժամկետում, եւ դա պայմանավորեց 2005 թ.-ի վերջին 2006 թ.-ի սկզբին սաստկացած լուրերով, ըստ որոնց Հայաստանը եւ Աղրբեջանը պատրաստվում են ստորագրել 1-2 Եշանոց նախնական փաստաթուղթ, որը նախատեսում է հայկական ուժերի դուրսբերումը ազատագրված տարածքներից: Այվազյանն ուշադրություն հրավիրեց այն հանգամանքի վրա, որ ազատագրված տարածքի հիմնախնդիրները դիտարկվում են Հայկական հարցից կտրված, մինչդեռ այդ հարցը ենթադրում է «հայ ժողովրդի Հայկական լեռնաշխարհում անկախ եւ ազատ ապրելու քաղաքական ու տարածքային պայմանների» ստեղծումը:

Նրա բնորոշմամբ, «Հայկական հարցի լուծումը կարող է լինել միայն հայոց պետականության վերականգնում եթե ոչ ամբողջ Հայաստանում (350 հազար քառ. կմ), ապա առևկազն նրա այնպիսի ընդարձակ հողատարածքում, որտեղ հնարավոր է հայոց քաղաքակրթության անվտանգ գոյությունն ու զարգացումը»:

Վերջում Այվազյանն ավելացրեց. «Ազատագրված տարածքն արդի Հայաստանի աշխարհաքաղաքական կարեւորության ու միշագգային հեղինակության ծանրակշիռ գրավականն է, հայկական գույգ պետությունների անվտանգության երաշխիքը եւ վերջապես՝ թուրքական եւ աղրբեջանական ցեղասպանությունների դիմաց հայոց արյամբ ցայսօր նվաճած արդար, թեկուզ եւ նվազագույն փոխհատուցումը»:

Մարդու իրավունքների գծով փորձագետ Հայկ Ալումյանը լրացրեց նրան, ընդգծելով, որ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն Աղրբեջանական ԽՍՀ-ի ենթակայության տակ ժամանակին մասնատվել է, եւ նրանից տարանշատվել Քարվաճառը, Լազինը, Ղուբաթլուն, ինչպես նաեւ Խանլարի շրջանը: Յետեւաբար մենք ազատագրել ենք ինքնավար մարզից արհեստականորեն տարանշատված եւ հակահրավական գործողություններով Աղրբեջանին բռնակցված տարածքները:

Նա միաժամանակ ընդգծեց, որ ԼՂՀ-ն օգտվելով ազգային ինքնորոշման իրավունքից ազատություն է ձեռք բերել, իսկ պետությունները նույնիսկ միշագգայնորեն ճանաչված լինելու կամ չլինելու հանգամանքից անկախ իրավահավասար են: Ղարաբաղյան հերոսամարտի հերոսներից Արկադի Տեր-Շաղենոսյանը նշեց, որ բանակցություններում ազատագրված տարածքների նույնիսկ աննշան մասի հանձնումը կհամարվի Հայաստանի

միակողմանի գիշումն Աղրբեջանին, իսկ դա սահմանների վերանայման նկրտումներում կխրախուսի վերջինին: Նա հիշեցրեց Թուրքիայի քաղաքականության մասին եւ դրա շարունակությունը համարեց այն, որ առ այսօր Սեւանին եւ Չանգեզուրին հավակնող Աղրբեջանը քննարկում է, թե ով է լինելու ապագա Երեւանի աղրբեջանցի ղեկավարը:

Մահապարտների միության փոխնախագահ Գագիկ Գինոսյանը նույնպես անընդունելի համարեց ազատագրված տարածքների գիշումը եւ դա հիմնավորելու համար նշեց. «Մեր դիրքերը շատ բարենպաստ են, իսկ սահմանները թերեւս միայն արեւելքից պաշտպանված չեն: Զիշելու դեպքում ինքնաբերաբար կմեծացնենք շփման գծերը, իսկ միայն Լաշինը մեր ձեռքում պահելու պարագայում խոցելի կդառնան ԼՂՀ-ի եւ ՀՀ-ի սահմանները, կփոքրանա ճակատի ռազմավարական խորությունը: Դա սպառնալիքի տակ կդնի Մեղրիի շոշանը եւ կմեծացնի Ստեփանակերտի խոցելիությունը նույնիսկ համազարկային գենքերի համար»:

Ելույթ ունեցավ նաեւ «Յայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» կազմակերպության Երեւանյան գրասենյակի տնօրեն Սամվել Կարապետյանը. «Ազատագրված տարածքները մեր հայրենիքի անքակտելի մասն են: Դրա խոսուն վկայությունը մեր ճարտարապետական հուշարձաններն են ու դրանց վայրագ ոչնչացումն Աղրբեջանում: Յետեւաբար մենք պետք ե բացառենք «Հող թղթի դիմաց» տարբերակը, որպեսզի կանգուն մնան մեր հուշարձանները»:

Մեզ մնում է ավելացնել, որ Վերոհիշյալ Ելույթներն առանձնակի նշանակություն հաղորդելով շնորհանդեսին՝ նպաստեցին, որ արտացոլվի «Յայտատանի ազատագրված տարածքները եւ Արցախի հիմնախնդիրները» ժողովածուի անժխտելի բարձր մակարդակը:

ԴԱԿՈՒ ԶԱՐԵԱՆ

AZG Armenian Daily #023, 09/02/2006